ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 19/19

13.12.2019թ. ք. Երևան

ՀՀ վարչական դատարանը (նախագահող դատավոր՝ Անի Հարությունյան) (այսուհետ՝ Դատարան) 2019 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Դատարանի դիրքորոշմամբ՝ դատարանում քննվող թիվ ՎԴ/2774/05/19 վարչական գործով կիրառման ենթակա «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության սահմանադրականությունը կասկած է հարուցում:

Վիճարկվող դրույթի բովանդակության կապակցությամբ Դատարանը նշում է, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերությունը, որով ժամանակավորապես կասեցվում են ոստիկանության ծառայող հանդիսացող մեղադրյալի լիազորությունները, ենթադրում է վերջինիս լիազորությունների ժամանակավոր դադարեցում քրեադատավարական հարաբերություններց անկախ և ինքնաբերաբար կերպով, առանց իրավունքների սահմանափակման հիմքերն ու ծավալը նշելու և պատճառաբանելու:

Ըստ Դատարանի՝ վիճարկվող նորմով սահմանված է ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը լիազորությունների ժամանակավորապես կասեցման վարչական մարմնի հնարավորությունն առանց իրավունքի սահմանափակումների հիմքերը և ծավալը նշելու, որը հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված որոշակիության սկզբունքին:

Դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը սահմանափակում է անձի՝ ՀՀ սահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված աշխատանքի ազատ ընտրության

իրավունքի իրացումը՝ չսահմանելով նման սահմանափակման բովանդակային հիմքեր և կիրառման որոշակի պայմաններ:

Դատարանի դիրքորոշմամբ՝ վիճարկվող դրույթը ոստիկանության ծառայողի լիազորություններն առանց որևէ հիմքի, զուտ վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու ուժով, կասեցնելու վերաբերյալ հրամանը դատական կարգով բողոքարկելիս անձը զրկված է նշված հրամանի հիմավորվածությունը դատարանում վիճարկելու իրական հնարավորությունից, ինչն էլ ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին:

Հետևաբար, համաձայն ՀՀ վարչական դատարանի դիտարկման՝ վիճարկվող դրույթը հակասում է ՀՀ սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին այնքանով, որքանով բացառում է քրեական հետապնդում իրականացնելու պայմաններում անձի լիազորությունների կասեցման վերաբերյալ որոշման դեմ արդյունավետ և գործնական դատական պաշտպանության իրավունքի իրացումը՝ բացառելով դատական պաշտպանության դիմելու արդյունքում հաջողության հասնելու ողջամիտ հեռանկարը:

Դատարանի դիրքորոշմամբ՝ վիճարկվող դրույթը չի համապատասխանում նաև ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի պահանջներին այնքանով, որքանով ոստիկանության ծառայողների համար չարդարացված խտրականություն և տարբերակում է նախատեսում միևնույն հանգամանքներում գտնվող միևնույն կարգավիճակով սուբյեկտների՝ այդ թվում՝ հարկային, փրկարար ծառայողների համեմատ, քանի նշված սուբյեկտների գործունեությունը կարգավորող օրենսդրութունը այնպիսի դրույթ, ինչպիսին վիճարկվող դրույթն է, չի նախատեսում:

Ելնելով վերոգրյալից՝ դատարանը խնդրել է որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը:

Հարկ է նշել, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության դրույթը ՀՀ Սահմանադրական դատարանում վիճարկվել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետ՝ Պաշտպան) կողմից, որը նշված դրույթից բացի, վիճարկել է նաև «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասի դրույթի սահմանադրականությունը:

Պաշտպանը «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության դրույթը վիճարկելիս իր դիրքորոշումը հիմնավորել է նրանով, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածում օրենսդիրը սահմանափակել է ոստիկանության ծառայողի իրավունքը կատարելու այլ վճարովի աշխատանք, զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ: Նման

սահմանափակման պայմաններում վիճարկվող դրույթն ամրագրում է, որ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցման պարագայում վերջինիս աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում: Իսկ «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից:

Պաշտպանի դիրքորոշմամբ՝ ստացվում է, որ ՀՀ գործող օրենսդրության ծառայողն իր նկատմամբ քրեական հետապնդման և լիազորությունների կասեցման հետևանքով միաժամանակ զրկված է լինում և՛ այդ ժամանակահատվածի համար աշխատավարձի վճարման հնարավորությունից, և՛ սեփական նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու հնարավորությունից, այլ պաշտոնի նշանակվեու կամ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից բացի այլ աշխատանք կատարելու հնարավորությունից:

Պաշտպանը գտել է, որ վիճարկվող իրավակարգավորումները հակասում են ՀՀ սահմանադրության 29-րդ, 31-րդ, 57-րդ, 66-րդ, 78-րդ և 80-րդ հոդվածներին:

Դատարանի և Պաշտպանի դիմումների հիման վրա ՀՀ Սահմանադրական դատարանում հարուցված գործերը միավորվել են և քննվելու են միևնույն վարույթում: Նշված գործով ՀՀ Սահմանդրական դատարանում նիստը նշանակված է 2020 թվականի հունվարի 30-ին:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն գործով սահմանադրական վեճի առարկան կազմող «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի **(«Կարգապահական տույժը կիրառելու և տույժը հանելու կարգը»)** 9-րդ մասի 2-րդ պարբերության բովանդակությունը հետևյալն է.

(…) Ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում:

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասի համաձայն (**Քրեական հետապնդում իրականացնելու և ծառայողական քննության ժամանակահատվածում նոր պաշտոնի նշանակվելու և ոստիկանությունում ծառայությունից ազատվելու արգելքը**)՝

Ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից:

Վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելու համար անհաժեշտ է նախևառաջ քննարկման առարկա դարձնել օրենսդրական այլ դրույթների և ինստիտուտների բովանդակությունը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը որպես դատավարական հարկադրանքի միջոց է նախատեսել պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը: Մասնավորապես, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի՝

1. Դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարությունը, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ:

2. Կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման մասին որոշումն ուղարկվում է նրա աշխատավայրի վարչակազմի ղեկավարին, որն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, պարտավոր է կատարել այն և դրա մասին տեղյակ պահել համապատասխան որոշումը կայացրած մարմնին կամ անձին:

3. Պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը վերացվում է դատարանի, դատախազի կամ քննիչի որոշմամբ, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի իմաստով՝ ոստիկանությունում ծառայությունը համարվում է հանրային ծառայություն:

1. Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:

2. (…)

3. Պետական ծառայությունն ընդգրկում է … ոստիկանությունում ծառայությունը:

Այսպիսով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը որպես դատավարական հարկադրանքի միջոց կիրառելի է հանրային ծառայության մեջ գտնվող ոստիկանի նկատմամբ:

Քրեադատավարական վերոնշյալ կարգավորումը, վիճարկվող դրույթների համեմատությամբ, լրացուցիչ երաշխիքներ է սահմանում պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման կամ, այլ կերպ ասած՝ լիազորությունների ժամանակավոր կասեցման դեպքում անձի իրավունքների պաշտպանության համար:

Մասնավորապես,

ա) պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կարող է կիրառվել միայն հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ,

բ) հանրային ծառայության մեջ գտնվող կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կարող է իրականացվել միայն դատախազի որոշմամբ կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշմամբ,

գ) հանրային ծառայող կասկածյալի կամ մեղադրյալի պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը կարող է իրականացվել այն դեպքում, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը, հանցագործությամբ պատճառված վնասի հատուցմանը կամ կզբաղվի հանցավոր գործունեությամբ,

դ) պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը վերացվում է դատարանի, դատախազի կամ քննիչի որոշմամբ, երբ վերանում է դրա անհրաժեշտությունը,

ե) պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման օրինականությունը և հիմնավորվածությունը կարող է վիճարկվել դատական կարգով:

Ի տարբերություն նշված քրեադատավարական երաշխիքների՝ վիճարկվող դրույթները թվարկված երաշխիքներից որևէ մեկը չեն նախատեսում: Ավելին, ի տարբերություն քրեադատավարական կարգավորման, պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման առավել վաղ դադարեցման ժամկետ, քան քրեական գործի ավարտն է կամ տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը, վիճարկվող դրույթները չեն նախատեսում:

Հարկ է նկատել նաև, որ օրենսդիրը վիճարկվող դրույթներում չի սահմանել ոչ միայն քննարկվող սահմանափակման նպատակը, այլ նաև դրա կիրառման հիմքերը, ինչն առաջին հերթին հանգեցրել է ՀՀ սահմանադրությամբ սահմանված համաչափության և

իրավական որոշակիության սկզբունքների խախտման: Բանն այն է, որ վիճարկվող դրույթը նախատեսված է «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի՝ կարգապահական տույժերը կիրառելու կամ հանելու կարգը սահմանող 43-րդ հոդվածում: Ընդ որում, հոդվածի քննարկվող մասի առաջին պարբերությունը ևս նախատեսում է ոստիկանության ծառայողի լիազորությունների ժամանակավոր դադարեցման հնարավորություն ծառայողական քննության ժամանակահատվածում այն դեպքում, եթե բավարար հիմքեր կան ենթադրելու, որ պաշտոնում մնալով նա կխոչընդոտի ծառայողական քննությանը:

Այսինքն՝ ծառայողական քննության դեպքում ոստիկանության ծառայողի լիազորությունների ժամանակավոր դադարեցման նպատակը և հիմքը օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին պարբերությունում բացահայտված է և համապատասխանում է կարգապահական տույժի կիրառման կարգը սահմանող հոդվածի տրամաբանությանը, ի տարբերություն երկրորդ պարբերության, որի մեջ որոշակի չէ, թե որն է ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելիս նրա լիազորությունների ժամանակավոր դադարեցման հիմքը և նպատակը, ու ինչ նշանակություն ունի նման սահմանափակումը կարգապահական տույժ կիրառելու հարաբերությունները կարգավորող դրույթի հետ: Միաժամանակ, հասկանալի չէ քրեադատավարական նույնական ինստիտուտի գոյության պայմաններում վիճարկվող կարգավորման առկայությունը՝ առանց բավարար օրենսդրական երաշխիքների սահմանման:

Այսպիսով, կարծում ենք՝ օրենսդրական քննարկվող կարգավորումն առաջին հերթին խախտում է համաչափության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի՝

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է:

Համաձայն ՀՀ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները չպետք է խաթարեն ողջամիտ հավասարակշռությունը հետապնդվող նպատակի և այդ նպատակին հասնելու համար օգտագործված միջոցի միջև[1]:

ՀՀ սահմանադրական դատարանն իր պրակտիկայում բազմիցս անդրադարձել է **լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի** սկզբունքին[2]:

«Իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը: Սահմանադրական դատարանը 2006թ. ապրիլի 18-ի ՍԴՈ-630 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրել է, որ «…օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության *(res judicata)* սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը»: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է **անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:** Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ»[3]:

Վիճարկվող իրավակարգավորման իրավական որոշակիությունը խնդրահարույց է, քանի որ ոտիկանության ծառայողի նկատմամբ իրականացվող գործողությունները, այն է՝ լիազորությունների ժամանակավոր դադարեցումը, կանխատեսելի և, առավել ևս, իրավաչափ չեն: Դրույթը չի կանոնակարգում ոստիկանության ծառայողի այնպիսի

---

[1] Մասնրամասն տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 23.02.2016 թիվ ՍԴՈ-1256, 12.07.2016 թիվ ՍԴՈ-1293 որոշումները:

[2] Տե՛ս, օրինակ, ՀՀ սահմանադրական դատարանի 04.05.2010 թիվ ՍԴՈ-881, 09.09.2008 թիվ ՍԴՈ-758 որոշումները:

[3] ՀՀ սահմանդրական դատարանի 02.04.2014թ. թիվ ՍԴՈ-1142 որոշումը:

վարքագիծը, որի պարագայում վերջինս կարող է ակնկալել որոշակի իրավաչափ սպասելիք:

Վիճարկվող դրույթներով սահմանված իրավակարգավորումները վտանգում են նաև **աշխատանքի ազատ ընտրության հիմնարար իրավունքն** այնքանով, որքանով անձը զրկվում է իր աշխատանքով զբաղվելու, այդ թվում՝ իր ընտրած աշխատանքը շարունակելու, այլ աշխատանք ընտրելու կամ աշխատանքից ազատվելու իրական, փաստացի հնարավորությունից:

ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի ազատ ընտրության իրավունք:

2. Յուրաքանչյուր աշխատող ունի աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք: Աշխատանքից ազատման հիմքերը սահմանվում են օրենքով:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2010թ. հուլիսի 7-ի թիվ ՍԴՈ-902 որոշման մեջ արձանագրել է, որ «Աշխատանքի ընտրության ազատությունը, որը ՀՀ Սահմանադրության 32-րդ հոդվածում ամրագրված է որպես սոցիալական ազատություն, ներառում է, ի թիվս այլոց, աշխատանք փնտրելու իրավունքը, որի մեկնաբանությունից բխում է նաև արդեն **ձեռք բերած աշխատանքից կամայականորեն չզրկվելու իրավունքը»:**

Քրեական հետապնդման ենթարկվող ոստիկանության ծառայողը, եթե նույնիսկ վերջինիս նկատմամբ քրեադատավարական ընթացակարգով սահմանված կարգին համապատասխան չի կիրառվել պաշտոնավարության ժամանակավոր դադարեցումը որպես դատավարական հարկադրանքի միջոց, միևնույն է, վիճարկվող դրույթի հիման վրա զրկվում է իր լիազորություններն իրականացնելու, իր ընտրած աշխատանքն իրականացնելու իրավունքից՝ զուտ քրեական հետապնդման ենթարկվելու հիմքով՝ մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այսինքն՝ համաձայն վիճարկվող դրույթի իմաստի՝ անկախ նրանից, որ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ոստիկանության ծառայողը պաշտոնում մնալով կխոչընդոտի քննությանը կամ կշարունակի հանցավոր գործունեությունը, թե՝ ոչ, միևնույնն է, վերջինիս լիազորությունները ենթակա են ժամանակավորապես դադարեցման:

Ընդ որում, համաձայն «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից, ինչը նշանակում է, որ անձը զրկվում է իր ընտրած աշխատանքով զբաղվելու և աշխատանքից իր ընտրությամբ ազատվելու իրավունքից:

Դատարանի և Պաշտպանի դիրքորոշումներն առ այն, որ վիճարկվող դրույթի իրավակարգավորումը հակասում է նաև խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքին, ևս լիովին հիմնավոր է:

ՀՀ Սահմանադրության 28-րդ հոդվածի համաձայն՝

Բոլորը հավասար են օրենքի առջև:

Ըստ ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածի՝

Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Օրենքի առջև հավասարության և խտրականության արգելքի սկզբունքի կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2008թ. հունվարի 29-ի թիվ ՍԴՈ-731 որոշման մեջ արձանագրել է.

«... պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները»:

Կամ, 2011 թվականի հունիսի 7-ի ՍԴՈ-967 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման համաձայն՝ «Սահմանադրական դատարանը գտնում է, որ ենթադրյալ խտրականության դեպքում առկա պետք է լինի մի իրավիճակ, երբ տվյալ կոնկրետ սուբյեկտի նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում նույն իրավիճակում գտնվող այլ սուբյեկտի համեմատությամբ, ում նկատմամբ վերաբերմունքն ավելի բարենպաստ է»:

ՀՀ Սահմանադրական դատարանի վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո ստացվում է, որ հանրային ծառայողի կարգավիճակ ունեցող այլ անձանց գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերում նախատեսված չէ վերջիններիս պաշտոնավարության ժամանակավոր դադարեցման կամ լիազորությունների կասեցման՝ վիճարկվող դրույթին համանման դրույթ: Սա նշանակում է, որ օրենսդիրը տարբերակված մոտեցում է ցուցաբերել նույն կարգավիճակն ունեցող ոստիկաններին հավասար կարգավիճակն ունեցող այլ հանրային ծառայողների, մասնավորապես՝ փրկարար կամ հարկային ծառայողների համեմատ, ինչը խտրականության արգելքի սկզբունքի խախտում

է:

Դատական պաշտպանության, արդար դատաքննության իրավունքի և արդարադատության մատչելիության, ինչպես նաև իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների բովանդակությունը ՀՀ Սահմանադրական դատարանի և Եվրոպական դատարանի դատական պրակտիկային համապատասխան մի շարք գործերով արդեն իսկ բացահայտվել է Գիտավերլուծական կենտրոնի կողմից նախկինում տրված եզրակացություններով,

Այսպես, ՀՀ գործող Սահմանադրությամբ անձի՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող սահմանադրաիրավական նորմերի բովանդակությունը հետևյալն է.

Հոդված 61. Դատական պաշտպանության իրավունքը և մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու իրավունքը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք (…):

Հոդված 63. Արդար դատաքննության իրավունքը

1. *Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք (…):*

Նշված սահմանադրաիրավական նորմերը համանման բովանդակությամբ սահմանված էին մինչև 2015թ. դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներում, որոնց վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանն իր դիրքորոշումն է արտահայտել 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներում:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր 2006թ. հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652, 2006թ. նոյեմբերի 16-ի ՍԴՈ-665, 2007թ. ապրիլի 9-ի ՍԴՈ-690 և մի շարք այլ որոշումներով բազմիցս անդրադառնալով արդարադատության մատչելիության և արդյունավետության խնդիրներին, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 1, 3, 14, 18, 19, 42, 43 և այլ հոդվածներով, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, միջազգային իրավական այլ փաստաթղթերում ամրագրված հիմնադրույթներով, վկայակոչելով նաև ժողովրդավարության զարգացման միջազգային փորձն ու Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան, կարևորել է անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար նորմատիվ **իրավական բավարար նախադրյալների ստեղծումն**

ու զարգացումը՝ հատկապես միջազգային այն պարտավորությունների շրջանակներում, որպիսիք Հայաստանի Հանրապետությունն ստանձնել է Եվրոպայի խորհրդի առջև: Միաժամանակ, կարևորվել է այդ պարտավորություններից բխող ներպետական հայեցողական որոշակի ազատությունն արդարադատության մատչելիության և, հատկապես՝ դատական բողոքարկման իրավունքի օրենսդրական սահմանափակումների հարցում:

Դատական պաշտպանության իրավունքն իր ամրագրումն է գտել մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» 1950թ. եվրոպական կոնվենցիայում և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական նախադեպերում: Այս իրավունքի հիմնական բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և պետության կողմից այդ իրավունքի իրացման համար **արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պարտականությանը:**

Անձի իրավունքների ապահովման ու պաշտպանության տեսանկյունից Սահմանադրության 18-րդ հոդվածի նպատակը իրավունքների խախտումների մասին անձի պնդումների դատական քննության և այդպիսի խախտումների հետևանքները վերացնելու իրավունքի երաշխավորումն է: Այդ իրավունքը սահմանափակման ենթակա չէ, և արդար դատավարության իրավունքը ցանկացած ժողովրդավարական հասարակության հիմնական հատկանիշներից մեկն է[4]:

Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է **պետության պոզիտիվ պարտականությունը՝** ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, **օրենսդրի պարտականությունը՝** լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, **իրավակիրառողի պարտականությունը՝** առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից[5]:

ՀՀ Սահմանադրության՝ դատական պաշտպանության իրավունքն ամրագրող 18-րդ հոդվածը ՀՀ սահմանադրական դատարանի դատական պրակտիկայում, որպես կանոն, վկայակոչվում է 19-րդ հոդվածի հետ սերտ միասնության մեջ՝ որպես իրենից մեկ միասնական իրավական երևույթ ներկայացնող: Դա մասնավորապես վերաբերում է **արդարադատության մատչելիության իրավունքին՝** որպես արդար դատաքննության

---

[4] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. հունվարի 16, ՍԴՈ-673, 8-րդ կետ:

[5] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

իրավունքի տարրի, որի սահմանադրական ամրագրումը դիտարկվում է 18-րդ և 19-րդ հոդվածներում՝ միաժամանակ և միասնաբար՝ չկոնկրետացնելով դրա սահմանադրական-տեքստային հիմքը[6]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել** անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Այսպիսով, 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներով ամրագրված (2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 18-րդ և 19-րդ հոդվածներ) դատական պաշտպանության իրավունքի և արդար դատաքննության էությունն անձի իրավունքների և ազատության պաշտպանության համար դատարան դիմելու, այդ թվում՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի սահմանումն է և այդ իրավունքի պատշաճ իրականացման համար պետության կողմից գործուն մեխանիզմների և մատչելի պայմանների ստեղծումն ու երաշխավորումը:

ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշմամբ՝ «իրեն ուղղված դիմումների հանդեպ դատարանի կողմից անգործություն ցուցաբերելը, ըստ էության, խաթարում է դատական պաշտպանության իրավունքի էությունը: Նման մոտեցումն անհնարին է դարձնում արդարադատությունը, այն դառնում է անձանց համար ոչ մատչելի: Նման իրավիճակն անհամատեղելի է իրավական պետության սահմանադրաիրավական սկզբունքների հետ:

Դատարանի՝ արդարադատության գործառույթ իրականացնելու միակ հիմքն օրենքով սահմանված կարգով իրեն ուղղված դատական պաշտպանության պահանջ պարունակող դիմումների քննությունն է: Առաջին ատյանի դատարանը որևէ հայեցողություն չունի օրենքին համապատասխանող դիմումին ընթացք տալու կամ չտալու հարցում՝ այն պետք է ընդունվի վարույթ և քննվի անվերապահորեն և առանց որևէ բացառության: Օրենքին չհամապատասխանող դիմումները վարույթ չեն ընդունվում, սակայն, եթե դրանք ժամանակին շտկվում են, ապա կարող են վերստին ներկայացվել: Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն:

Օրենսդիր մարմնի խնդիրն է ազգային դատավարական իրավունքում ամրագրելու անգործության հաղթահարման արդյունավետ մեխանիզմներ: Հարցը վերաբերում է դատական պաշտպանության արդյունավետ միջոցների երաշխավորմանը՝ հենց անգործության դեմ գործուն իրավական երաշխիքներ ձեռնարկելու եղանակով,

---

[6] ՀՀ սահմանադրության մեկնաբանություններ, *Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի ընդհանուր խմբագրությամբ,* Երևան, 2010, էջեր 222-223:

ապահովելու և երաշխավորելու մարդու արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը»[7]:

Վերոգրյալ դիրքորոշումների համատեքստում, կարծում ենք, վիճարկվող դրույթով հանրային ծառայողի կարգավիճակ ունեցող ոստիկանության ծառայողն արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը ևս վտանգվում է: Բանն այն է, որ վիճարկվող դրույթին համապատասխան պաշտոնավարությունը ժամանակավոր կասեցնելու դեպքում ոստիկանության ծառայողը զրկված է իր պաշտոնավարման դադարեցման հիմնավորվածությունը դատարանում արդյունավետորեն վիճարկելու հնարավորությունից, քանի որ նման սահմանափակման որևէ հիմք օրենսդիրը չի նախատեսել, բացառությամբ ոստիկանությյան ծառայողի նկատմամբ հարուցված քրեական հետապնդման փաստից: Հետևաբար, վիճարկվող իրավակարգավորման տիրույթում անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության երաշխավորմանն ուղղված **անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծելու** պետության պոզիտիվ պարտականությունը, կարծում ենք, բավարար կատարված չէ:

Ավելին, լիովին հիմնավոր է նաև Պաշտպանի դիմումի հիմնավորումներն առ այն, որ վիճարկվող իրավակարգավորումները հակասում են նաև Սահմանադրությամբ սահմանված անմեղության կանխավարկածի սկզբունքին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի՝

Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում ոստիկանության ծառայողի լիազորությունների ժամանակավոր դադարեցումը, աշխատավարձ ստանալու իրավունքի սահմանափակումը, այլ պաշտոնի նշանակվելու և զբաղեցրած պաշտոնից իր նախաձեռնությամբ ազատվելու արգելքը խախտում են անձի անմեղության կանխավարկածի սկզբունքն այնքանով, որքանով կիրառվող սահմանափակումներն ըստ էության անմեղ անձի նկատմամբ կիրառվող անհամաչափ զրկանքներ են, որոնք փաստորեն անձի նկատմամբ կիրառվում են մինչև վերջինիս նկատմամբ կայացված օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայությունը:

---

[7] ՀՀ սահմանադրական դատարան, 2007թ. նոյեմբերի 7, ՍԴՈ-719, 6-րդ կետ:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ պարբերության և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16.1 հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը խնդրահարույց է:

Համակարգող՝

Լյուդվիկ Դավթյան